ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

«Տեղեկագիր» № 5—6 (10—11), Երևան, 1941 թ.

Բ. Առաքելյան

ՀԱՅԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԼԾԻ ԴԵՄ 703 ԹՎԻՆ

Հետևելով հիտլերյան ֆաշիստ-կանիբալների արարքներին ժամանակակից պատերազմում, ակամայից հիշում ենք ողջ պատմության ընթացքում տեղի ունեցած նվաճողական մարդակուլ պատերազմները՝ լի նենգությամբ, վայրագությամբ, բարբարոսությամբ, մարդկության ստեղծած նյութական ու կուլտուրական արժեքների ոչնչացմամբ և դժվար է գտնել համեմատության եզր այն ճիվաղային արարքների հետ, որ գործում է գերմանական ֆաշիզմը։

Սպանվածների գանգերից բուրգեր կանգնեցնող ասորեստանյան թագավորները, Դարեհի դեսպոտիզմը, հին աշխարհը ստրկացնող հռոմեական հպարտ, ամբարտավան կայսրները, բարբարոս վանդալները, զուրանի անունով երկրներ նվաճող իրենց կապուտ-կողոպուտով մահ, ամայություն ու գերեվարություն սփռող արաբական հորդաները, սելջուկյան թուրք-թաթարական հրոսակախմբերը, եվրոպական խաչակիրները, Չինգիզ-խանը, Լենկթեմուրը, գերմանական վայրագ ասպետական օրդեները, Աղա Մամեդ-խանը կամ արյունարբու Աբդուլ Համիդը չեն կարող համեմատվել հրեշ Հիտլերի և գերմանական ֆաշիզմի հետ։ Ովքե՞ր են սփռել այնքան մեծ ստրկություն, սով, արհավիրք, մահ ու վանդալիզմ, որքան գերմանական ֆաշիզմը, ովքե՞ր են գործադրել այնքան շատ մահու և արհավիրքի մեքենաներ ու մեքենայություններ, որքան գերմանական ֆաշիզմը։

Գերմանական ֆաշիզմը այժմ սպառնալիքի տակ է դրել սրբազան ազատության և արդար աշխատանքի հիման վրա կոմունիստական հասարակություն հաստատած մեր մեծ հայրենիքը։ Բայց միշտ էլ բռնությանը հակադրվել է ողջ առաջավոր մարդկությունը և իր ջախջախիչ հարվածն է տվել նրան։ Տարակույս չկա, որ նոր բռնակալն էլ կջախջախվի։

Հայ ժողովրդի պատմությունն էլ լի է հերոսական գոտեմարտերով հանուն հայրենիքի ազատության, բարեկեցության ու կուլտուրական բարգավաճման, ընդդեմ նվաճողական ու հարստահարիչ բարբարոսական հորդաների։ Դեռ նոր միայն կազմավորվող հայ ժողովուրդը հերոսական կռիվներ է մղել Աքեմենյան Պարսկաստանի դեմ՝ թոթափելու նրա լուծը։ Ազատագրական ժողովրդական պայքարը Սելևկյան տիրապետության դեմ, 2-րդ դարի սկզբներին մեր թ. առաջ, պսակվեց հայերի հաղթանակով և բուն հայկական առաջին պետականության հաստատմամբ Արտաշես I-ի գլխավորությամբ։

Արտաշեսի հետնորդները՝ Տիգրան II-ը, Արտավազդը, Արտաշես II-ը և մյուսները շարունակում են պայքարը հռոմեական և պարթևական նվաճողների դեմ։

Հետագայում հայ ժողովուրդը պայքար էր մղում Սասանյան Պարսկաստանի և Հռոմի զորարանակների դեմ, որոնք ձգտում էին գրավել Հայաստանը։

Չորրորդ դարի վերջերին Հայաստանը բաժանվեց Արևելյան Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև։ 428 թվին Պարսկաստանը վերջ դրեց հայկական Արշակունյան պետության գոյությանը։ Սակայն հայերի ազատագրական պայքարը նոր, առավել հուժկու արտահայտություն գտավ Սասանյան տիրապետության դեմ 451, 481—84 և 572 թվերին տեղի ունեցած մեծ ապստամբությունների մեջ։ Ապստամբություններ տեղի ունեցան նաև Հայաստանի՝ բյուզանդական կայսրությանն անցած մասում։

Այս բոլոր ապստամբությունները լի են անձնազոհ հերոսությամբ, մեծ սխրագործություններով ու հնարագիտություններով ընդդեմ թշնամու դերազանց ուժերի, որոնք ձգտում էին օտար տիրապետություն և լուծ հաստատել Հայաստանում, ոչնչացնել երկրի անկախությունն ու ազատությունը, կողոպտել նրանց հարստությունները։

Այս հոդվածում նպատակ ունենք անել մի այդպիսի հերոսական կռվի պատմությունը, որ տեղի է ունեցել 703 թվին արաբական խալիֆաթի՝ Հայաստանը նվաճած զորքերի դեմ։

Հայաստանի նվաճումը արաբական խալիֆաթը սկսեց դեռ 640 թվին։ Արաբական նվաճողների դեմ մեկ տասնամյակից ավելի հերոսական կռիվ էր մղում հայ ժողովուրդը Թեոդորոս Ռշտունու գլխավորությամբ։ 650-ական թվականների սկզբներին արաբների ու բյուզանդական կայսրության կողմից Հայաստանի անկախությանը սպառնացող վտանգն այնքան մեծ էր, որ նրանից խուսափելն անհնարին էր դառել։ Մնում էր ընտրել չարիքներից փոքրագույնը, և Թեոդորոս Ռշտունին 652 թվին պայմանագիր կնքեց արաբների հետ, որով Հայաստանը ճանաչեց արաբական խալիֆաթի գերիշխանությունը։ Նույն 7-րդ դարի 80-ական թվականներին հայերը օգտվելով խալիֆաթի ներքին կռիվներից, թոթափեցին այդ գերիշխանությունը, բայց ստիպված էին պաշտպանվել բյուզանդական կայսրությունից, որը արաբական խալիֆաթից ոչ պակաս բարբարոսությամբ մեծ զորքեր դուրս բերեց հայերի դեմ և նվաճեց Հայաստանը։ Սակայն բյուզանդական կայսրության տիրապետությունը Հայաստանում երկար չտևեց (689—698)։ Դարի վերջին արաբական խալիֆաթը Աբդ-ալ-Մելիքի գլխավորությամբ ճնշեց ներքին երկպառակությունները, արյան մեջ խեղդեց Իրաքի, Խորասանի, Խուզիստանի ապստամբությունները։ Արաբական բանակները դեպի արևելք շարժվելով, մտան Միջին Ասիա, իսկ 698 թվին շարժվեցին դեպի հյուսիս՝ Հայաստանի, Աղվանից աշխարհի և Վրաստանի վրա։

Հայաստանի նվաճումը հանձնարարված էր խալիֆի եղբորը՝ Մահմեդ իբն-Մրվանին, որը երդվել էր «չգարձուցանել զսուր ի պատեանս մինչև ի մէջ աշխարհիս»[1]։ Երկու տարի տևեց Հայաստանի նվաճումը՝ 698—700 թ. թ.։

[1] Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, Պետերբուրգ, 1887 թ., էջ 20։

թշնամուն դիմադրելու համար ոտքի էին ելել բոլոր նրանք, ովքեր ընդունակ էին այս կամ այն կերպ օգտակար լինել թշնամու դեմ մղվող մարտերում։ Սակայն թշնամին կռվում էր խիստ գերազանց ուժերով, միաժամանակ չէր խորշում գործադրել խարեություն և նենգություն՝ ամրոցները գրավելիս. «Քանզի պատիր բանիւք կոչէր ի խաղաղութիւն»[1], և ուխտադրուժ կերպով գրավելով ամրոցները, սրի էր քաշում խաղաղ բնակչությանը, գերի էր վարում կանանց և երեխաներին։ Կամ եկեղեցու մնացաքանակ հարստությունները (որ կուտակվել էին դարերի թանգարժեք նվիրներից) կողոպտելու համար արաբները սպանում են իրենց ծառային, մեղքը գցում հոգևորականների վրա, կոտորում են նրանց և կողոպտում եկեղեցիները։

Ամրանալով լեռներում և ամրոցներում, հայերը ուժեղ դիմադրություն են ցույց տալիս նվաճողներին։ Երկու տարի տևող կռիվներից հետո արաբները 700 թվին գրավում են հայերի վերջին հենարանը՝ Սևանա կղզու ամրոցը[2]։

Գրավելով Հայաստանը, Մահմեդ զորավարը մահ ու ավեր սփռեց երկրում. որտեղով անցել էին արաբական զորքերը, նրանց ետևում մնացել էին ծխացող ավաններ ու գյուղեր, ամայացած դաշտեր, լքված այգիներ և պարտեզներ։ Ավարի ու կողոպուտի հետ արաբները մեծ թվով կանայք ու երեխաներ գերեվարեցին դեպի Աստրիք, և երկիրը, ինչպես ժամանակով մոտիկ պատմիչն է վկայում, մնաց որպես խոզերի ոտքերի տակ տրորված, խանձված ու ծխացող օրան[3]։

Մահմեդը Հայաստանը կառավարելու համար թողեց Աբդուլա ոստիկանին։ Եթե արաբական գերիշխանության առաջին 50-ամյակում (652—700 թ. թ.) Հայաստանը պահպանում էր իր ինքնուրույնությունը և մարզպանական շրջանում հաստատված կարգերը, միաժամանակ հայկական ֆեոդալական ու սեփականատիրական ողջ հարաբերությունները և միայն վճարում էր չնչին հարկ ի վավերացումն արաբական գերիշխանության, ապա Հայաստանի այս երկրորդ նվաճումից հետո ամեն ինչ խիստ փոխվում է։ Հայաստանը կորցնում է իր ինքնուրույնությունը, նշանակվում են արաբ կառավարիչներ—ոստիկաններ, որոնք իշխում էին երկրում, ողջ հողը, ջուրը, անտառները, արոտները, մի խոսքով՝ երկրի ողջ հարստությունը արաբներն արդեն համարում էին իրենց սեփականությունը։ Հայ ֆեոդալները և ճորտական կախումից ազատ շինականները կորցնում են իրենց հողատիրական իրավունքը, կամ այդ իրավունքը նրանց տրվում է որպես առանձնաշնորհում արաբական խալիֆաթի կողմից։ Այս դեռ բոլորը չէ։ Իրերի նոր դրությունը ամրապնդելու համար արաբները որոշում են ոչնչացնել հայերի դիմադրական ուժը և առաջին հերթին հողատիրական դասը՝ աղնվականությունն ու հայկական հեծելազորը. «Մորհուրդ վատ ի մէջ առեալ բառնալ զազատախումբ տոհմն յաշխարհէս Հայոց հանդերձ նոցին հեծելովք»[4]։ Աբդու-

---

1 Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, Պետերբուրգ, 1887 թ., էջ 20։

2 Յովհաննու կաթողիկոսի Պատմութիւն Հայոց, 1912 թ., Թիֆլիս, էջ 93—94։

3 Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, էջ 22։

4 Նույն տեղում, էջ 23։

լան կալանքի է արնում Սմբատ Բյուրատյան Բագրատունուն, որը 686—691 թվերին եղել էր Հայաստանի սպարապետը, իսկ 691 թվից՝ Հայաստանի կառավարիչը, ըստ երևույթին միաժամանակ նաև սպարապետը։ Կալանավորվում է և Սահակ կաթողիկոսը, որը Սմբատի հետ միասին աքսորվում է Դամասկոս։ Սմբատ Բագրատունին ճանապարհին փախչելով, վերադառնում է Հայաստան[1]։ Աբդուլայի նենգությունը՝ ոչնչացնելու հայկական ռազմական ուժը և տոհմիկ հողատիրական դասը, ակնհայտ էր։ Սմբատ Բագրատունին լավ էր հասկանում արաբների նենգությունը։ Նա խորհրդակցության է հավաքում մի քանի նախարարների՝ որոշում կայացնելու հայերի անելիքների մասին։ Այս առթիվ Ղևոնդը վկայում է.

«Իսկ իբրև զգայր [Սմբատ] զդաւաճանութիւնն՝ կոչէր առ ինքն զՀամազասպ իւր զազատախումբ բանակին, զՍմբատ որդի Աշոտոյ իշխանի[2] և զՎարդ որդի Թէոդորոսի իշխանի[3] և զեղբայր իւր զԱշոտ[4] և զայլ նախարարսն. և խորհէր հնարս դտանել, որով մարթասցեն զանձինս ազատեցուցանել»[5]։

Նախարարներն զգում են, որ չեն կարող իրենց ուժերով կռվի բռնվել արաբական զորքերի հետ։ Նրանք որոշում են թողնել Հայաստանը, անցնել բյուզանդական կայսրության մեջ։

«Եւ եղև [բանս] խորհրդին՝ տեղի տալ և գնալ յաշխարհէս առ Թագաւորն Յունաց»[6]։

Երևի ոչ բոլորն էին համամիտ այդ որոշմանը, այլ կերպ նախ՝ անհասկանալի կմնար, թե ինչու նրանք խորհուրդ են հարցնում այդ հարցի կապակցությամբ մի հայտնի միայնակյացի, որն ապրում էր Վասպուրականի Առեստակողմ կոչված վայրում։ Միայնակյացը նրանց որոշմանը հավանություն չի տալիս և զգուշացնում է նենգությունից։ Երկրորդ՝ ըստ երևույթին այդ որոշմանը դեմ էր և ինքը՝ Սմբատը, որը նախարարների և երկու հազարանոց կազմ ու պատրաստ հեծելազորի հետ միասին շտապ վերադառնում է Այրարատյան նահանգը և հասնում է Արաքս գետին՝ Ակուռի մոտ։ Արաբական զորքերը ելնելով Նախիջևանից, հինգ հազարանոց բանակով սկսում են հետապնդել հայերին։ Իմանալով այդ բանը, հայերն անցնում են Արաքսը և բանակ են դնում Վարդանակերտ ավանում (այժմյան Մարգարա գյուղի տեղը կամ նրա մոտերքը)։ Արաբական զորքերը հետապնդելով մոտենում են հայերին։ Սմբատը պատգամավորներ ուղարկելով արաբների մոտ, հայտնում է նրանց.

«Ընդ ի՞նչ, ասէ, պնդեալ գայք զկնի մեր. զի՞նչ ինչ մեղաք ձեզ. ահա-

---

1 Զամչյան—հատ. Բ, 377։ Դատելով այն բանից, որ Վարդանակերտի հակատամարտը տեղի է ունեցել 703 թվի սկզբին, Սմբատի վերադարձը դնում ենք 702 թվին։

2 Մեզ թվում է, որ Սմբատը Սմբատ Բյուրատյանի եղբոր՝ Աշոտ Բագրատունու որդին է, իսկ Աշոտը Հայաստանի իշխանն է եղել 686—689 թվերին։

3 Եթե սա Թեոդորոս Ռշտունու որդի Վարդն է, ապա պետք է պառամյալ ծերուկ լիներ, որքանով նա հիշվում է 650 թ. դեպքերի կապակցությամբ։

4 Թերևս այս Աշոտը նույնը լինի վերը հիշված Աշոտ իշխանի հետ, որը Սմբատ Բագրատունու ավագ եղբայրն էր, մյուս Սմբատի հայրը։

5 Պատմութիւն Ղեւոնդեայ, էջ 23։

6 Նույն տեղ, էջ 23։

վադիկ երկիրդ մեր առաջի ձեր հ. ձեզ տուեալ եմք զբնակութիւնս մեր. զայ-գիս մեր և զանտառս և զանդաստանս մեր. արդ ընդե՞ր և զանձինս մեր խնդրէք։ Թույլ տուք մեզ գնալ ի սահմանաց մերոց»[1]։

Այս վկայությունից պարզ երևում է այն, ինչ մենք վերը շարադրեցինք, որ 700 թվից սկսած հայերը զրկվում են իրենց սեփական երկրի հողից, ջրից, անտառներից, անդաստաններից, այլև մասամբ բնակության վայրերից։ Արաբները պատասխանի փոխարեն մարտի են պատրաստվում։ Երկու կողմերից զորքերն արդեն մարտական կարգ էին ընդունել և պատրաստ էին պատերազմի։ Հայերը ամրացնում են Վարդանակերտի փողոցները, գիշերը հանգստանում են և վաղ առավոտյան «յարուցեալ յարդարեցին զունդ առ զունդ և ճակատ առ ճակատ, և խմբեցաւ պատերազմն»[2]։ Երկու հազարանոց լավ զինված հայկական հեծելազորը հարձակվում է արաբական հինգ հազարանոց բանակի վրա։ Կռիվը տեղի է ունենում Արաքսի ափին, այնպիսի ցրտաշունչ մի օր, երբ Արաքսի երեսը պատած էր սառույցով։ Կռվում էին երկու բանակներ՝ մեկն իր հայրենիքի ազատության և բնաջնջումից փրկելու արդար գործի համար, մյուսը՝ նվաճված երկրում արաբական խալիֆաթի տիրապետությունը ամրապնդելու, ավեր ու մահ տարածելու համար։ Կատաղի ճակատամարտում հայերը ցուցաբերում են անսահման հերոսություն և սխրագործություն, որով և ապահովվում է նրանց հաղթանակը թվով ավելի քան կրկնակի գերազանց թշնամու նկատմամբ։ Արաբական զորքերը ծանր պարտություն են կրում։ Սրի առջևից փախչող արաբ զինվորները իրենց գերեզմանն են գտնում Արաքսի սառույցների վրա կամ դեռի հատակն են իջնում խորտակվող սառույցից։

Ղևոնդն այդ առթիվ վկայում է. «Եւ որք ի սրոյն փախեան՝ անկան ի գետն Երասխ, քանզի պաղուցեալ էր ի խստութենէ օդոյն. և իբրև ելանէին ի վերայ պաղին, բազմութիւն զօրացն՝ անդէն վաղվաղակի խորոց մտանէին, խորտակեալ պաղին՝ որք ի սրոյն զերծեալք էին և այնպէս հեղձամահ վճարէին ի կենաց»[3]։

Նույն պատմիչի վկայությամբ՝ արաբական զորքերից միայն 300 հոգի խույս տալով մահից, ապավինում են Շուշան տիկնոջ[4] մարդասիրությանը, որը համոզում է արաբներին հետապնդող Սմբատին (Աշոտ իշխանի որդուն)՝ ազատ արձակել թշվառ զինվորներին, անգամ բժշկական օգնություն է ցույց տալիս վիրավորներին և ճանապարհում է Դիմասկոս։

Բյուզանդական պատմիչ Թեոփանեսը[5] այս դեպքերը նկարագրելիս հայտնում է, թե հայերին օգնության էր եկել մի բյուզանդական զորագունդ, որն իբր թե այրել է արաբ ոստիկանի արքունիքը Դվինում և Վարդանակերտի ճակատամարտին մասնացել է հայերի հետ՝ հարվածելով արաբներին։ Սակայն այս անցքերը մանրամասն նկարագրող Ղևոնդ վարդապե-

1 Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, 1887 թ., էջ 25։

2 Նույն տեղ, էջ 26։

3 Նույնը։

4 Այս տիկին Շուշանը Վահան Կամսարականի դուստրն էր և, ըստ երևույթին՝ Սմբատ Բագրատունու կինը։

5. Տես Զամչյան, հատ. Բ, էջ 378։

տը, որի մանկության օրերին է, հավանաբար, տեղի ունեցել Վարդանակերտի կռիվը, չի հիշում բյուզանդացիների մասին, չեն հիշում և մյուս պատմիչները, թեև նրանք չեն մոռանում հիշատակել, որ հայերը գրված ավարից բաժին են հանում բյուզանդական կայսրին, իսկ վերջինս կյուրապաղատություն է շնորհում Սմբատ Բագրատունուն։ Վարդանակերտում հայերի տարած հաղթանակի հուչակը մեծ էր։ Հովհաննես կաթողիկոսը վկայում է, թե դեռ իր ժամանակ էլ (10-րդ դար) արաբների մեջ տարածված էր դարձել «Վարդանակերտը թող բնավ չհիշեցվի մեզ»։

«... Ցարդ ևս բան առ Հագարացիսն ըստ իւրեանց աղխատրոյզ բառին պատմի, թե « Վարդանակերտ առիւ մի՛ յիշեսցի մեզ»[1]։

Մեզ թվում է, թե բյուզանդական պատմիչի վկայությունը նրա սեփական միտումավոր հորինվածքն է։

Վարդանակերտի ճակատամարտի ժամանակը ճիշտ է որոշված Օրմանյանի մոտ[2] և մենք անհրաժեշտ չենք համարում քննության առնել այդ հարցը։

Ինչպես միշտ, այնպես էլ այս անգամ, Վարդանակերտի ճակատամարտից հետո առաջին իսկ հաջողությունը արձագանք է գտնում երկրի մյուս գավառներում։ Անմիջապես ոտքի է կանգնում Վանանդը, Շիրակը և Արշարունիքը։ Կամաբական զորավոր նախարարական տան գլխավորությամբ հայերը ջարդում են արաբական բանակը նաև Վանանդում։ Արաբական զորավարը Ոգբան հազիվ է կարողանում խուսափել մահից և վերադառնալ Դամասկոս։

Այս դեպքերը նկարագրող Հովհաննես կաթողիկոսը վկայում է. «Ընդդէմ դարձան [Հայք] ասպատակաց հէնից Իսմայէլեան զօրուն։ Եւ վասն զի Ոգբայ ոմն զօրապետ մեծ հանդերձ զօրօք բազմօք շրջէր ընդ կողմամբք Վանանդայ՝ անդ ապա հասեալ ի վերայ Կամսարականն հանդերձ ազատօքն Վանանդայ կոտորեցին սպառ-սպուռ զօրս նոցա և ինքն փախստեայ անցեալ գնայր առ ամիրապետն իւր»[3]։ Այսպիսով, Արարատյան նահանգը, Շիրակը, Արշարունիքը, Վանանդը, որոնք Հայաստանի սիրտն էին կազմում, ազատվում են արաբական զորաբանակներից։

Սմբատ Բագրատունին լավ էր հասկանում, որ խալիֆաթի ահռելի ուժերին միայն հայկական ուժով դիմադրելը անհնարին է. այդ է պատճառը, որ Վարդանակերտում ունեցած առաջին հաջողությունից հետո նա շտապում է բարեկամություն հաստատել բյուզանդական կայսրության հետ։ Նա արաբներից գրված ավարից գեղեցիկ նժույգներ և թանգարժեք իրեր է բաժին հանում բյուզանդական կայսրին։ Մյուս կողմից՝ ներքին հուզումների ու գահակալական կռիվների հետևանքով թուլացած բյուզանդական կայսրության համար կարևոր էր բարեկամությունը հայերի հետ. ահա թե ինչու Աբսիմարոս կայսրը, որը հինգ տարի առաջ (698 թ.) մեծ զորաբանակի գլուխ անցած Հայաստան էր մտել ճնշելու նույն Սմբատ Բյու-

---

1 Յովհաննու կաթողիկոսի Պատմութիւն Հայոց, 1912 թ., Թիֆլիս, էջ 95։

2 Օրմանյան, Ազգապատում, էջ 781։

3 Յովհաննու կաթողիկոսի Պատմութիւն Հայոց, էջ 95։

բատյան Բագրատունու ապստամբությունը, այժմ շտապում է կյուրապաղատի կոչում շնորհել Սմբատին։ Իսկ վերջինս ընդունելով այդ պաշտոնը, ամրանում է Տայոց աշխարհի Թուխարք ամրոցում։

Հայաստանը մաքրելով արաբներից, հայկական զորքը Սմբատ Բագրատունու գլխավորությամբ Տայքից շարժվում է դեպի Վասպուրական։ Արաբական մի երրորդ ջոկատ էլ, թվով հայկականից գերազանց, ընաջինջ է արվում Վասպուրականի Ռշտունյաց գավառի Գուկանք կոչված գյուղի մոտ։ Ճակատամարտում անխնա կերպով սրի է քաշվում այդ ջոկատը հայկական զորքի կողմից[1]։ Այդ առթիվ Ղևոնդը պատմում է.

«Զայնու ժամանակաւ դարձեալ այլ հէն գայր ի վերայ զօրուն, որ ի կողմանս Վասպուրական աշխարհին. և եկեալ յանդիման լինէին ի դաւառն Ռշտունեաց ի գիւղն, որում Գուկանսն կոչեն։ Անդ յանդիման լինէին միմեանց։ Իբրև տեսին զի նուազունք էին, զիմեցին սաստկապէս ի վերայ նոցայ և նոյն ժամայն գթացեալ ողորմութեանն Աստուծոյ, և յայնմ նուազի ևս հասանէր ի թիկունս օգնականութեան։ Եւ զամենեսեան ի սուր սուսերի մաշեցին...»[2]։

Արաբական ամբողջ ջոկատից միայն 280 հոգի փախչում, ամրանում են եկեղեցում, հայերն ուզում են այրել եկեղեցին արաբների հետ միասին, սակայն Սմբատ Բագրատունին լավ է համարում պաշարմամբ հարկադրել նրանց հանձնվել։

Հետաքրքրական է Սմբատ Բագրատունու պատասխանը պաշարված արաբական ջոկատին։ Արաբական զորավարը զգալով իրենց անխուսափելի վախճանը, զիմում է Սմբատին։

«Մեր լուեալ է եթէ ազգ քրիստոնէից ողորմած է. իբրև տեսանէ զոք ի վիշտս՝ գթայ և ողորմի. արդ ողորմեցարուք մեզ և տուք մեզ զանձինս մեր պարգև, և զինչս մեր առէք ձեզ յաւարի»[3]։ Սմբատը պատասխանում է.

«Մեք, ասէ, ուսաք ի տեառնէ մերէ եթէ ողորմութիւն ողորմածաց արժան է առնել. իսկ դուք ազգ անողորմ էք և ոչ արժանի ողորմութեան և ոչ արասցուք»[4]։

Տաղանդավոր զորավարը անողոքություն է հռչակում անողորմ թշնամու նկատմամբ։ Արաբական եռասեր զորավարը խնդրում է խնայել թեկուզ միայն իր կյանքը, զենք չգործադրել իր վրա, խոստանալով հանձնվել։ Հայերն իսկապես նրա դեմ զենք չեն գործադրում, բայց լիճն են նետում նրան[5]։

Խիստ սահմանափակ են մեր տեղեկությունները 703 թվի ապստամբության վերաբերյալ, սակայն այդ սուղ տեղեկություններից էլ պարզ երևում է, որ 703 թ. ապստամբությունը լոկ տեղական նշանակություն չի ունեցել մի գավառի համար։ Համենայն դեպս հայերին հաջողվել է արա-

---

1 Օրմանյանը սխալվում է Գուկանքի ճակատամարտը դնելով Վարդանակերտի ճակատամարտից առաջ։ Տես Ազգապատում, էջ 779։

2 Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, էջ 26։

3 Նույն տեղ, էջ 27։

4 Նույն տեղ, էջ 37։ Ընդգծումը մերն է. Բ. Ա.

5 Նույն տեղ, էջ 27։

բական զորքերից մաքրել Հայաստանի ամենակարևոր նահանգները՝ Այրարատը, Շիրակը, Արշարունիքը, Տայքը և Վասպուրականը։

703 թվի ապստամբությունը Սմբատ Բագրատունու գլխավորությամբ, այսպիսով, չի սահմանափակվել Վարդանակերտի հռչակավոր ճակատամարտով. այն հաջողությամբ տարածվել է նաև Հայաստանի մյուս շրջանները և պսակվել է հաղթանակով, շնորհիվ այն բանի, որ մահ ու ավեր, ամայացում, կողոպուտ ու գերեվարություն սփռող օտար նվաճողների դեմ հայկական զորքը և նրան օգնող ժողովուրդը կռվում էին աննկարագրելի անձնազոհությամբ ու խիզախությամբ։

Որքան էլ կարճատև լիներ այդ հաղթանակը[1], 703 թվի ապստամբությունը արաբական խալիֆաթի լծի դեմ կազմում է օտար տիրապետության դեմ հայ ժողովրդի մղած պայքարի հերոսական էջերից մեկը։

[1] Նույն 703 թվին արաբական հակայական մի զորաբանակ նորից մտնում է Հայաստան։ Հայերը ստիպված են լինում տեղի տալ և կրկին հպատակություն հայտնել։